Կարծիք

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ՝ Մուրադյան Լիլիթ Հայկազի «Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. սահմանադրական փոփոխությունների համատեքստում» թեմայով «Պետության և իրավունքի տեսության և պատմության, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական աշխատանքի վերաբերյալ

Գրախոսվող աշխատանքը նվիրված է իրավունքի տեսության և պրակտիկայի խնդրահարույց հարցերից մեկի՝ իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Քննարկվող աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է ազգային օրենսդրության զարգացման և դրա հետ կապված հարակից հարցերի լուսաբանման անհրաժեշտությամբ:

Ցանկացած գիտական աշխատանքի, այդ թվում գրախոսվող ատենախոսության հաջողությունը մեծամասամբ կապված է դրա տրամաբանական կառուցվածքով, նպատակի և խնդիրների ճիշտ դրվածքով:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածական մասում հեղինակը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, ներկայացնում է թեմայի գիտական մշակվածության վիճակը, հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը բացահայտում է իրավաստեղծ գործունեության էությունը, հասկացությունը, տեսակները և դրանց բովանդակային առանձնահատկությունները և իրավաստեղծ գործունեության սկզբունքները:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Իրավաստեղծման կառուցակարգի բովանդակությունը, տարրերը և գործառույթները» վերտառությամբ, որը առաջին

գլխի տրամաբանական շարունակությունն է, հեղինակը պատշաճ գիտական մակարդակով վերլուծության է ենթարկել իրավաստեղծ գործունեության կառուցակարգի (մեխանիզմի) տեսական-մեթոդաբանական առումները և գործառույթները:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը հանգամանորեն վերլուծել է իրավաստեղծ գործունեության կատարելագործման և ազգային օրենսդրության համակարգի զարգացման հիմնական միտումները:

Գրախոսվող աշխատանքի հիմնական նպատակն է Հայաստանում իրավաստեղծման հարցերի համալիր ուսումնասիրությունը՝ իրավաստեղծման բնույթի, գործառույթների, կառուցվածքի և այլ հարակից հարցերի տեսական և գործնական կողմերի վերաբերյալ:

Դրված նպատակին հասնելու համար հեղինակը առաջ է քաշել հետևյալ **հարցադրումները.**

• վերլուծել իրավաստեղծման հասկացությունը, էությունը և իրավաբանական բնույթը, բացահայտել նրա կառուցվածքն ու գործառույթները իրավական կարգավորման մեջ,

• բացահայտել իրավաստեղծման հետ կապված համակարգային կազմակերպական հիմնախնդիրները, դրանց առանձնահատկությունները,

• բացահայտել իրավաստեղծման մեխանիզմի հարաբերակցությունը շրջակա սոցիալական միջավայրի հետ, ուսումնասիրել իրավաստեղծ գործընթացի ձևախեղումները, մշակել առաջարկություններ կապված նորմաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի իրավական կարգավորման կատարելագործման հետ:

Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը պատշաճ գիտական մակարդակով համարժեք լուծումներ է տվել իր առջև դրված հարցադրումներին:

Քննարկվող աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ հեղինակը ստացված արդյունքների հիման վրա մշակել է գիտականորեն հիմնավորված դրույթներ և գործնական բնույթի առաջարկություններ, որոնց հանրագումարը կարելի է որակել որպես գիտական հիմնախնդրի լուծում, որն ունի կարևոր սոցիալ-

քաղաքական և իրավական նշանակություն: Ատենախոսության մեջ ձևակերպված են իրավաստեղծ գործունեության հայեցակարգային հիմնադրույթներ՝ որպես համալիր տեսական կառուցակարգեր, գաղափարներ, սկզբունքներ, առաջնահերթություններ, որոնք կոչված են կատարելագործել և որակական նոր աստիճանի բարձրացնել իրավաստեղծ որոշումների բովանդակային մակարդակը:

Գիտական նորույթը դրսևորվում է նաև իրավակազմավորման և իրավաստեղծ գործունեության մշակույթի զարգացման գործընթացում իրավաստեղծման կառուցակարգերի կատարելագործման և ներուժի բացահայտման մեջ: Աշխատանքում հիմնավորվում է իրավաստեղծման կառուցակարգերի գործընթացի գիտական հետազոտությունների գերակայության առաջխաղացումը, որը բացահայտում է իրավաստեղծ պրոբլեմատիկայի հետազոտության նոր փուլ, իրավակազմավորման խնդիրների լուծման համար նոր մոտեցումների անհրաժեշտություն և դրանց գործնական կիրառում: Այս մոտեցումների նորույթը կայանում է իրավակազմավորման, նորմաստեղծման, օրինաստեղծման, իրավական կարգավորման և իրավակիրառիչ գործունեության բնագավառում նոր մոտեցումների ու լուծումների ներդրում՝ մեկ հիմնական նպատակով՝ բարելավել նորմատիվ-իրավական ակտերի որակը և իրավակարգավորումների արդյունավետությունը:

Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային հետևյալ հայեցակարգային մոտեցումը, ըստ որի օրինագծերի և օրենսդրական ակտերի հայեցակարգերի մշակման գործընթացում անհրաժեշտ է բացահայտել այն թիրախավորված սոցիալական ոլորտները, որոնք օբյեկտիվորեն ենթակա են կանոնակարգման և այն նախադրյալների համալիրը (սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն), որ առավել հավանականությամբ կարող է ներազդեցություն ունենալ ապագա իրավակարգավորումների վրա: Այս ամենի բացահայտումը, մեր կարծիքով, կբարդացնի ընդունվող նորմատիվ իրավական ակտերի որակը:

Իրականացված հետազոտության արդյունքում վերաիմաստավորվում են ավանդական մոտեցումները իրավաստեղծման խնդիրների վերաբերյալ, առաջարկվում են նոր գաղափարներ և առաջարկներ, որոնք ստեղծում են նախադրյալներ իրավաստեղծ գործունեության կատարելագործման, նրա

սոցիալական հիմնավորվածության և իրավակարգավորումների արդյունավետության ապահովման համար:

Քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված հետևությունները, եզրահանգումները, եզրակացությունները և իրավաստեղծ գործունեության վերաբերյալ նորովի հարցադրումներն ու մոտեցումները խորացնում են մեր գիտելիքները իրավունքի տեսության տվյալ բնագավառի վերաբերյալ և կարող են տեսական բազա հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները և արդյունքները կարող են օտագործվել օրինաստեղծ և իրավաստեղծ գործունեության, իրավակիրառ և իրավամեկնողական գործընթացներում, ինչպես նաև հիմք հանդիսանալ դրանց կատարելագործման համար:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված ծավալուն աշխատանքը, այդուհանդերձ ունենք հետևյալ նկատառումները.

Առաջին, հեղինակը ներկայացնելով իրավաստեղծ գործունեության սկզբունքները՝ դրանք դիտարկում է առավելապես վերացարկված ձևով, այսպես կոչված, գիտական կաբինետային տեսանկյունից: Այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ էր այդ վերացարկությանը տալ որոշակի կոնկրետություն, օրինակ՝ կոնկրետ օրինագծերի վերաբերյալ նշել դրանց մշակման սկզբունքները, մասնավորապես՝ հասարակական անհրաժեշտությունը, սոցիալական հիմնավորվածությունը և այլն:

Երկրորդ, գտնում ենք, որ աշխատանքը բովանդակային առումով առավել շահեկան կներկայանար, եթե հեղինակը ազգային իրավաստեղծ գործունեության գործընթացը համեմատական վերլուծության ենթարկեր ԱՊՀ երկրների համանման գործընթացների հետ, քանի որ մարտահրավերները և ծառացած խնդիրները այդ երկրներում, ըստ էության, համանման են, հետևաբար իրավահամեմատական ուսումնասիրության արդյունքում կարելի էր ստանալ որոշակի հարցերի պատասխանները կամ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Հարկ է նշել, որ մատնանշված նկատառումներն ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ և չեն կարող ազդել Լիլիթ Հայկազի Մուրադյանի

գիտական աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը և արժանահավատությունը: Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները, մեր կարծիքով, հիմնավորվում են ազգային և միջազգային իրավաստեղծ պրակտիկայի քննական վերլուծությամբ, մասնագիտական գրականության լիարժեք օգտագործմամբ, ինչպես նաև սահմանադրական, օրենսդրական և դատաիրավական հայեցակարգերի, նախագծերի և բարեփոխումների ծրագրերի համադրման ու իրավահամեմատական համակողմանի քննարկումների և վերլուծությունների արդյունքով:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված, են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Լիլիթ Մուրադյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար Լիլիթ Հայկազի Մուրադյանի «Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. սահմանադրական փոփոխությունների համատեքստում» թեմայով ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է իրավունքի տեսության, օրենսդրության, իրավակիրառական պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Լիլիթ Հայկազի Մուրադյանի «Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. սահմանադրական փոփոխությունների համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսության և պատմության, պետական և իրավական ուսմունքների

պատմություն» մասնագիտության գծով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավագիտության թեկնածու Հ.Ս. Խաչատրյան

Հ.Ս. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի գիտական քարտուղար՝ Ա. Ջիջյան